

Ա. Ս. ԿԾՈՑԱՆ

XI—XIV ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Անտիկ աշխարհի բժշկագիտության մեջ անատոմիայի և ֆիզիոգիայի, ինչպես նաև ուրիշ շատ բնագավառներում ձեռք բերված գիտելիքների զգալի մասը, հասկանալի պատճառներով, վաղ միջնադարում արդեն մոռացության տրվեց:

Միջին դարերում, արաբական խալիֆաթի երկրների բժիշկները, շնորհիվ իրենց ուսումնասիրությունների մեջ կիրառվող գերազանցապես հիպոկրատյան մեթոդոլոգիայի, սոմատիկ և ինֆեկցիոն հիվանդությունների ախտաբանության, դեղագիտության, հիգիենայի և դիետետիկայի բնագավառներում ձեռք բերեցին զգալի նվաճումներ։ Այդ էր պատճառը, որ այսպես կոչված արաբական բժշկականությունը միշաղգային ասպարեզում գերակշռող և գլխավոր տեղ էր գրավում։ Բայց մահմեղական կրոնի կաշկանդող ազդեցության հետևանքով, որը խստիվ արգելում էր դիահեռականություններ կատարել, անատոմիայի և ֆիզիոլոգիայի բնագավառում նրանց բժիշկները ոչ միայն չառաջադիմեցին, այլև չկարողացան պահպանել անտիկ աշխարհի այդ բնագավառների զարգացման մակարդակը։ Խսկ ինչ վերաբերում է եվրոպական երկրներին, պետք է նշել, որ Ֆեոդալական կարգերի խիստ սահմանափակվածությունը և ժողովուրդների հոգևոր կյանքի վրա եկեղեցու լիակատար իշխանությունն ու դաժան ինկվիզիցիան ոչ միայն բժշկականության, այլև առհասարակ գիտության բոլոր բնագավառներում ոչնչացրել էին ռացիոնալ խոսքը։

Հանրահայտ է, որ միջնադարյան Եվրոպայի համալսարաններում տիրող սիոնաստիկայի և դոգմատիկայի ճիրաններում խեղովում էր ամեն մի ստեղծագործ միտք։

Եվրոպական երկրներում նույնպես արգելված էին դիահերձում-ները։ Սիցիլիացի բժշկապետ Մարցիանի հաղորդման համաձայն, Ֆրիզրիխ II-ի հրամանով (1238 թ.) թուլլատրված էր Սալերնոյի բժշկական գպուցում հինգ տարին մեկ անգամ բժիշկների և լիբա-րույժների ներկայությամբ դիահերձումներ կատարելու Սակայն այդ հաղորդումը կասկածի է ևնթարկվում բժշկագիտության զրեթե բու-լոր պատմարանների կողմից։ Ավելի՛ն, նույնիսկ արևմայան բուր-ժուական բժշկագիտության պատմարանները հարկադրված են ըն-դունելու, որ միջնադարյան եվրոպացում իշխող սխոլաստիկայի ու զոգմատիզմի հետևանքով՝ անատոմիան և ֆիզիոլոգիան որպես զի-տություն միջնադարում զոյտթյուն չեն ունեցել։ Այսպիս, օրինակ, ամերիկացի պատմարան Օտտո I. Բեթմաննը ընդհանուր բժշկա-գիտության պատմությանը նվիրված իր զրում (տպ. 1956 թ.) զրում է, որ միջնադարյան եվրոպական համալսարաններում ժամերով իրար հետ տարացած վիճարանում էին այն մասին, թե ձին քանի՛ ատամ ունի, փոխանակ բաց անելու ձիու բերանը և հաշվելու նրա ատամները¹։

Վերջին տարիների ընթացքում մեղ մոտ՝ Մատենադարանի ձե-ռագրերի ուսումնասիրության հիման վրա գրված աշխատություն-ներում ցույց է տրված, որ զարգացած ֆեռալիզմի ժամանակա-շրջանի բժշկագիտությունը Հայաստանում ընթացել է գլխավորա-պես փորձի և դիտողականության, փաստական նյութերի ընդհան-րացման հիման վրա։ Խոկ Լ. Ս. Խաչիկյանը «Դիահերձումները հին Հայաստանում»² իր վերին աստիճանի հետաքրքրական հոդվածում ցույց է տվել, որ քննարկվող ժամանակաշրջանի Հայաստանում անատոմիան զարգացել է հերձումների միջոցով։ Ուսումնասիրե-լով հայ ականավոր դիտնական, բնագետ, փիլիսոփա, գրող և մա-տենագիր Հովհաննես Երդնկացու-Պուղի բարոյագիտական քարոզ-ները, նա ուշագրություն է դարձնում այն տողերի վրա, որտեղ Եր-դրնկացին հավաստի տվյալներ է թողել մեղ այն մասին, որ Կիլի-կիայում, Հայանարար նաև բուն Հայաստանում, բժշկագիտության զարգացման նպատակով, թուլլատրված էր մահվան դատապարտ-ված մեղադրյալներին հանձնել բժիշկներին՝ կենդանահատում (vici-*seccio*) կատարելու։ Ահա այդ տողերը, «Զոր օրինակ բժիշկ հան-ճարեղ և իմաստուն զմահապարտօք առեալ բազմադիմի մահուամբ սպանանէ և աղջի-աղջի կտտանօք և կեղեքելով, մինչ գտանէ զա-

¹ Otto L. Bettmann *Apictorial history of Medicine*, 1956, 76.

² Լ. Ս. Խաչիկյան, «Դիահերձումները հին Հայաստանում» (տե՛ս ՀՍՍՌ ԴԱ հասարակական դիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», 1947, թ. 4)։

մենայն յօդուածոցն և զջլացն և զերակացն և փորոտեացն զորպիսութիւն, ի ձեռն միոյ լլկանաց բազմաց արասցէ աւգուստ¹:

Այսպիսով, պարզ է դառնում, որ քննարկվող ժամանակաշըրջանում մեզ մոտ կենդանահատումների դեպքերում հատուկ ուշադրություն են դարձրել մարդու անատոմիայի, ներքին օրգանների դասավորության (տեղադրական անատոմիայի) ու նրանց «որպիսության», այսինքն ֆիզիոլոգիայի, և նրանից կատարված շնորհանքների վրա:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մինչ այդ մեզ հետաքըրաբըրություղ ժամանակաշրջանի անատոմիայի և ֆիզիոլոգիայի հարցերի լուսաբանման վրա առաջին անգամ կանգ էր առել սովետահայ բազմավաստակ գիտնական լ. Ա. Հովհաննիսյանը «Բժշկության պատմությունը Հայաստանում»² իր կապիտալ աշխատության II և III մասերում:

Սակայն լ. Ա. Խաչիկյանի վերը նշված հոդվածը մեր մեջ առավել հետաքրքրություն առաջացրեց, և «Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի բժշկագիտությունը Հայաստանում» թեմայի ուսումնասիրության ընթացքում, բնականաբար, մենք հատուկ ուշադրություն պետք է դարձնենք մեր բժշկական մատենագրության մեջ տեղ գտած «Վասն կազմութեան մարդոյց» կամ «Յաղագս բնութեան մարդոյա» և այլ խորագրերը կրող գլուխներում շարադրված այն փաստական նյութերի վրա, որոնք այս կամ այն շափով նոր լուս են սփոռում մեզ հետաքրքրող հարցերի վրա: Այդ շրջանի մեր բժիշկների գիտական խոր ըմբռնումների մասին են վկայում նաև հիվանդությունների կլինիկական նկարագրությունների մեջ դրսեվորվող պաթոֆիզիոլոգիական և պաթուանատոմիական երևույթներին ու պրոցեսներին նրանց տված վերլուծությունները:

Ամենից առաջ անհրաժեշտ ենք համարում նշել, որ քննարկվող ժամանակաշրջանի մի շարք ձեռագիր բժշկարաններում հանդիպում ենք տվյալների, որոնց համաձայն, լավ բժիշկ կարող է լինել նա, ով լավ ծանոթ է մարդու անատոմիային, ֆիզիոլոգիային, հիվանդություններ առաջացնող պատճառներին, նրանց բուժման և խնամքի մեթոդներին:

¹ Լ. Ա. Խաչիկյան, Դիակերձումները գին Հայաստանում (Հայկական ՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», 1947, № 4, էջ 83—90):

² Լ. Ա. Օգանեսյան. История медицины в Армении. Ереван, 1946, ч. II и III.

Այս առթիվ՝ մատենադարանում պահպաղ Ն 7049 ձեռագիրը բժշկարանում մենք կարգում ենք.

«Ապայ այսուհետեւ գրեմք զմարդակազմութիւնըն, որպէս հրամայիցին բժշկական վարդապետքն իմանալ [մարդու] զրնութիւն, զանդամն և զօդուածն, զսիրտն, և զղեղն, զարիւնն, և զջղերն, զոսկորն, և զցաւոց շարժմունքն, բժշկական խնամ առնիլն մարմնոց առ ի պէտ առողջութեանան¹:

Թերված տողերը պարզ և սրոշակի հաստատում են այն միտքը, որ բժիշկը առաջին հերթին պետք է լավ իմանա մարդու անտոմիան ու ֆիզիոլոգիան:

Քննարկվող հարցի վերաբերյալ ուշադրավ և շատ արժեքավոր տեղեկություն է պարունակում Փարիզի աղբային գրադարանի հայկական ձեռագրերի բաժնում 257 համարի տակ պահպաղ ձեռագիրը բժշկարանը, որտեղ ասված է՝ «Ով որ մարդոյն բնութիւն չի ճանաչել ու զեղանէ, նայ մեծ զեն կու հասցնէ մարդոյն. պատրաստ կացիք որ չի լինիք բժիշկ անդէտա»²:

Մարդու անատոմիային և ֆիզիոլոգիային վերաբերող մեր հարյուրից ավելի ձեռագրական աղբյուրներում, կմախք կազմող ոսկորների վերաբերյալ ասված է, որ նրանք կատարում են հենարանի դեր, որ առանց նրանց մարդը ոտքի վրա չէր կարող կանգնենել և քայլել Սակայն այդ աղբյուրներում ոսկորների անատոմիական հատուկ նկարագրությունների չենք հանդիսում, այս առումով թերևս բացառություն կարելի է համարել ողնաշարը կազմող ոսկորները և կողոսկորները, որոնց ստորև առիթ կունենանք ժանուարականությանը:

Ընդհանուր առմամբ ասված է, որ տղամարդու մոտ կմախքը կազմող ոսկորների թիվը հասնում է 248-ի, իսկ կնոջը՝ 252-ի: Բայտ որում գլխուղեղի տուփը և ատամները միասին վերցրած 39 ոսկորից են կազմված, ողները՝ 30—34, կողերը՝ 24, ձեռքերը՝ 35, ոտքերը՝ 42 և այլն: Մարմինը երկու հավասար կեսերի բաժանելուց հետո, յուրաքանչյուր կեսում հաշվել են 180 մկաններ, ամբողջ մարմնի զարկերակների թիվը՝ 520 և այլն³: Նույն կարգի տվյալներ են պահպանվել Հոգերի, անոթների և, առհասարակ, ներվերի մասին:

1 Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատում (Մատենադարան), ձեռագիր բժշկարան Ն 7049, էջ 91ա:

2 ոչանդէս ամսօրեայց, 1924, էջ 321, Վ. Թորգոնյանի «Հայ բժշկական ձեռագիրը» հոդվածը:

3 Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատում (Մատենադարան), ձեռագիր բժշկարան Ն 7049, էջ 5ա—10բ:

Տարբեր ձեռագիր աղբյուրներում բերված թվական տվյալները հաճախ չեն համընկնում ու հակասական են: Այդ պետք է բացատրել հետազոտող հեղինակների հետաքրքրության աստիճանով, նրանցից ուժանք հաշվել են միայն մեծ մկանները, հողերը, անոթները և ներվերը, մյուաները՝ և մեծերը, և՝ միջինները, իսկ այլք՝ նաև փոքրերը: Հավանաբար հակասական թվերի առաջացման մեջ որոշ շափով մեղք ունեն նաև ձեռագրերն ընդօրինակող գրիչները, որոնք կարող են, անուշադիր արտագրելով՝ աղավաղել բնագիրը:

Այսուհանդերձ, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ բժիշկները անոթաբանության և ներվաբանության վերաբերյալ ունեցել են մոտավոր, իսկ երբեմն էլ ճիշտ պատկերացումներ:

Միջնադարյան հեղինակները մարդուն նվիրված նկարագրությունները կատարել են վերից-վար, այսինքն՝ գլխից դեպի ցած:

Հստ ձեռագրական աղբյուրների գերազշող մասի, գլխուղեղային գանգի տուփիը բաղկացած է 6, իսկ ըստ Մատենադարանի № 7049 ձեռագիր բժշկարանի՝ 7 առանձին ամուլ ուսկորներից, որոնք իրար հետ միացած են կարերի միջոցով¹: Գանգի տուփի ճակատային մասը կաղմող ոսկորներն ավելի բարակ են, քան ծոծրակային հատվածի ոսկորները: Այդ նկարագրություններում այնուհետև ասվում է, որ գանգի տուփը իր մեջ պարունակում է մարդու համար շատ կարենոր՝ «թագաւոր» օրգան՝ ուղեղը, որի մեջ գտնվում են հինգ զգայարանների՝ տեսողության, լողության, հոտառության, ճաշակելիքի և շոշափելիքի կենտրոնները:

Բնությունը այնպես է ստեղծել մարդուն, գրված է այդ աղբյուրներում, որ գլխուղեղը արտաքին աղդակներից ու պատահարներից պահպանվում է 7 շերտերով: Առաջինը մազերն են, երկրորդը՝ գլխի մաշկը, երրորդը՝ գլխի մկանները, շորրորդը՝ ոսկորները, հինգերորդը՝ մի թաղանթ է, որը ուղեղային գանգի տուփը ծածկում է դրսից (հավանաբար խոսքը վերնոսկորի՝ periostum-ի մասին է—Ա. Կ.), վեցերորդը՝ ուղեղային գանգի տուփը ներսից ծածկող թաղանթը, որը բժիշկ Գրիգորիսը «հաստ մայր»² է անվանում (հասկանալի է, որ խոսքը կարծենու՝ մարդու մասը՝ մասին է—Ա. Կ.), յոթերորդը, որը անմիշապես գլխուղեղն է ծածկում, մի թաղանթ է, որը բժիշկ Գրիգորիսը «նաւոր մայր»³ է կոչում, այսինքն՝ փափուկ

1 Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան), ձեռ. № 7049, էջ 32բ—36ա:

2 Նույն տեղում, ձեռ. № 415, էջ 180. սույն ձեռագիրը արտագրված է 1469—73 թթ., բայց ենթադրվում է, որ բնագիրը պետք է ստեղծված լինի XIII դարում:

3 Նույն տեղում:

ուղեղապատակ (ρία ματερ—Ա. Կ.), վերջում ասվում է, որ այս բոլորի շնորհիվ ուղեղի վնասվելը դյուրին չի լինում¹

Մեր ձեռապիք բժշկաբաններում գեմքի սոկորներից հիշատակվում են քթի և բերանի 2 սոկորները, այսինքն՝ վերին և ստորին ծնուասկորները։ Համաձայն նրանց նկարագրությունների, վերին ծնուարի սոկորը միացած է զանգի հետ, նա ունի 16 ատամ, որոնք բաժանվում են 4 ահեսակիու Գրանցից 4-ը՝ «հիփոդ» են, 4-ը՝ ծամուզ 4-ը՝ կտրոզ և 4-ը՝ աղացող, որպես «շաղացը»։ Կղակը կազմված է 2 սոկորներից, որոնք 2 հողերով ամբացած են զանգի հետո Հավանաբար հեղինակը հետազոտել է սաղմբ կամ նորածնի դիակը, որպէսիսէ, ինչպես հայտնի է, միայն նրանց մոտ է, որ կղակը 2 սոկորից է կազմված լինում։ Ստորին ծնուար նույն դասավորությամբ ունի 16 ատամներ, համապատասխան վերևի ատամներին, որոնք իրար զիմաց գտնվելով՝ ջրաղացի քարերի նման կատարում են սննդամթերքները մանրելու իրենց ֆունկցիան։

Այդ նույն աղբյուրներում ողնաշարին վերաբերող նկարագրության մեջ ասվում է, որ պարանոցը կազմված է 7 ողներից։ Բայց նկարագրությունների, մարդու պարանոցային ողները տափակ են, անցրը լայն է, նրանք այնպես են իրար հետ միացած, որպեսով մարդը կարողանա զլուխը պտտեցնել իր շրու կողմը՝ դեպի աշճախ, վերև և ներք և նայելու համար։ Կրծքային ողները թվով 12 են, նրանք ավելի խոշոր և ուժեղ են, քան պարանոցային ողներինը։ Կրծքային ողների անցրը ավելի փոքր է, քան պարանոցային ողներինը։ Գոտկային ողները թվով 5 են, սրանք, իրենց հերթին, ավելի խոշոր են և ուժեղ, քան կրծքային ողները։ Նրանց մեջ գոյսություն ունի փոքր քանակությամբ «գիճութիւն»—հավանաբար խոսքը վերաբերում է գոնդողանման կորիզին (nucleus pulposus) կամ միջողային ներդաշնառին (fibro cartilago intervertebral), որը, ինչպես նշում են, հնարավորություն է տալիս մարդուն դեպի աշճախ, անունը և ներքե (այսինքն դեպի առաջ) շարժումներ կատարելու²։

Այնուհետև, սրբանուսկը և պոշուկի մասին մի շարք հեղինակներ գրում են, որ դրանք ունեն 3-ական ողներ, իսկ ուրիշները, այդ թվում նաև Ամիրողովաթը, գրում են, որ կանանց մոտ դրանց երկուսի գումարը միասին վերցրած 4 ողնով ավելի է, քան տղամարդկանց մոտ։ Եվ ապա ավելացնում են, որ այդ 4 ավելի ողները կանանց մոտ ծննդաբերության ակտի ժամանակ բացվում են, իսկ

1 Մատենադարան, ձեռ. Ա 4268, էջ 259ա. սույն ձեռագիրը արտագրված է 1384 թ.։

2 Ամիրդավլար Ամասիացի, Օգոստ բժշկության, 1940, էջ 29։

ծննդաբերության ակտից հետո նորից գալիս, գրավում են իրենց նորմալ տեղը (1): Ողները իրենց աշ և ձախ կողմերում ունեն փոքրիկ անցքեր, որոնց միջով ողնուղեղից դուրս են գալիս սպիտակ թելեր (խոսքը վերաբերում է ողնուղեղից դուրս եկող ներվարմատներին՝ radicula—Ա. Կ.):

Կողոսկորների նկարագրության մասին ևս պահպանվել են տվյալներ, որոնց համաձայն, նրանք 24 հատ են: Կողերը ծուռ են աղեղնաձև, այնպես որ նրանց երկու երրորդը կիսաբոլոր է, իսկ մեկ երրորդը՝ բոլոր Տարրեր մարդկանց մոտ նրանք տարբեր են լինում՝ երկար, կարճ, բարակ և հաստ: Կողոսկորները իրենց մի ծայրով կպած են լինում ողնաշարին, իսկ մյուսով՝ կրծոսկրին: Հիշատակված է նաև ծփան կողոսկորների գոյության մասին, որոնք իրենց մի ծայրով միացած են ողնաշարի հետ, իսկ մյուս ծայրով պատ են:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ, ինչպես Մ. Ա. Տիկոտինն է վկայում, կլավդուա Գալենուաից սկսած մինչև Ավիցենան (980—1037 թթ.), Մոնղինոն (XIV դ.) ու ոք ցուց չեր տվել կողերի կորզնթարթության, այսինքն աղեղնաձև լինելու հանգամանքը¹:

Կրծքավանդակը կոչված է իր և փորի խոռոշի օրգանները արտաքին ազդակներից և հնարավոր հարվածներից պաշտպանելու համար: Բժիշկ Գրիգորիսը (XIII դ. վերջը XIV դ. սկիզբը) հայտնել է այն հետաքրքրական միտքը, որ կրծքավանդակը ծածկող հյուսվածքներն ու փակեղները մասնակցում են շնչառության ակտին²: Իսկ երբ նա խոսում է ճողվածքների մասին, օգտագործում է մի շարք մաքուր հայերեն բառ-տերմիններ: այս հանգամանքը ցուց է տալիս, որ բժիշկ Գրիգորիսը գաղափար է ունեցել որովայնային մամուլը կազմող շերտերի մասին:

Այսպես, իր աշխատության և վասն փորոյն ներքին մաշկին նեղերոյնա³ խորագիրը կրող գլխում, որտեղ նա նկարագրում է որովայնային մամուլի և «աճուկային» ու «փոստ աճուկային» ճողվածքները, հանդիպում ենք՝ «պորտից վերև» աշ կամ ձախ հատվածի, «պորտի շուրջը», «փորը փոր», «պորտից ցածր» աշ և ձախ հատվածներ, «միս ընդ մորթ», «աճուկային», «աճուկ փոստային», «պորտի», սպիտակ գծի ճողվածքներ բառ-տերմիններին ու արտահայտություններին: Դրանք անպայմանորեն վկայում են այն մա-

¹ М. А. Тикотин. Леонардо да Винчи. Медгиз, 1957, стр. 76.

² Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռադրատուն (Մատենադարան), ձեռ. № 415, էջ 60բ—69ա:

³ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռադրատուն (Մատենադարան), ձեռ. № 415, էջ 103բ—105ա:

սին, որ զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի հայ բժիշկները պաղափառ են ունեցել ինչպես կրծքավանդակը ծածկող հյուսվածք-ների ու փակիղների, այնպես էլ որովայնային մամուլը կազմող հյուսվածքային շերտերի մասին:

Հոդերի վերաբերյալ ասված է, որ երկու ոսկորների (մեծը մեծի, մեծը փոքրի, կամ փոքրը փոքրի) միացմամբ կազմվում է «եղանի», այսինքն՝ Հոգի Բայց մեր տրամադրության տակ գտնված և ոչ մի ձեռապիք բժշկաբանում չենք հանդիպել Հոդի կոնկրետ անատոմիական նկարադրության:

Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանին վերաբերող բժշկական մատենադրության մեջ ուշադրավ տվյալներ են պահպանվել ներվային համակարգության անատոմիայի ու ֆիզիոլոգիայի մասին, Այսպես, օրինակ, Հովհաննես Երզնկացի-Պուտը (XIII դ.), որը իր բաղմաթիվ աշխատություններում բիոլոգիայի և մարդու ֆիզիոլոգիայի վերաբերյալ ուսցիուալ, մատերիալիստական մտքեր է արտահայտել, այդ առթիվ դրում է, որ երակները, զարկերակները և ներվերը («երակք», «շնչերակք» և «ջիլք») միմյանց շահերը նկատի առնելավ, միշտ իրար հետ են լինում և համագործակցում¹: Նա գլուխում է, որ մարմնի բոլոր օրգան-սիստեմների, ծայրանդամների, մկանների կենսունակությունն ու շարժումները պայմանավորված են կենտրոնական ներվային համակարգության ֆունկցիայով, որին ենթակա են ողնուղեղը և պերիֆերիկ ներվերը: Ահա այդ տողերը, «Շարժութիւն որոց սկիզբն է խելքն, և ողեղն, որ է մասն խելացն, իսկ գործարանք սորա բնաւորեալ ջիլ և շաղեապ և մկունքն, որ ի մարմնոյ և ի ջլուտ նեարդից, որով շարժի ձեռն ի գործ և ոտն ի յրնթաց և այլ ամեն մասունք մարմնոյ...»²: Ասված է պարզ և որոշակի:

Մարդու ներվերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի վերաբերյալ շափաղանց արժեքավոր տվյալներ է Հաղորդում Մատենադարանի № 549 ձեռագրի հեղինակը՝ «Վասն ստեղծման ոսկրացն և զլացն» խորագիրը կրող Հոդվածում: Նրա կարծիքով, մարդն ունի 452 շեղեր (ներվեր—Ա. Կ.): Սկզբում 15 մեծամեծ գլանաձեզ ներվեր են, որոնք բաժանվում են ավելի մանր ներվերի, մարդու գլխուղեղից ծաղում են 14 երակներ³: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է

1 Մատենադարան, ձեռ. № 2173, էջ 320ա—321բ:

2 Նույն տեղում, էջ 105բ:

3 Հին և միջին դարերից սկսած մինչև XIX դարի առաջին տասնամյակները չեն շարունակում էին կարծել, որ ներվերը անոթների նման սնամեջ են:

4 Միջնադարյան հայ բժշկական մատենադրության մեջ՝ «ջիլ», «ջիլ», իսկ

ԷՇ զույդ գլխուղեղային ներվերին: Ի միջի այլոց, անհրաժեշտ է հիշատակել, որ առաջին անգամ Մարինուար, որից հետո և Կ. Գալենը (Galenus Cladius—131—211 թթ.) նկարագրել են գլխուղեղային միայն 7 ներվեր¹:

Այնուհետև, մեր հեղինակը գրում է, որ նրանք, այսինքն ներվերը, մարմնի բոլոր օրգանները կապում, միացնում են գլխուղեղի հետ: Ներվերի միջոցով են գոյանում և նրանցից են սնվում և ուժ առնում մարմնի բոլոր օրգանները: Այդ ներվերի միջոցով է գլխուղեղը շարժումներ ուղարկում մարմնի բոլոր օրգաններին:

Ահա այդ տողերը. «Եւ զամեն երակ յանդամ ի կապեաց, որ ամեն անդամքն նորօք գոյանան, և ի յիւրեանցմէն սնանին և ուժ առնուն, և այլ յըղարկէ յայդ երակացդ շարժութիւն ամեն անձինն՝ և խօսք, և լեզփ, և այլ ի տեսութիւն աշխցն, և այլ ի լսելիքն, և այլ ի սգառութիւնք...» Եւ Բ. (2) Երակ դատարկ քիթն յղարկեաց, որ զաղէկ հոտն և զգէշն զինչ որ առնուն դարձեալ յղեղն հասցնեն...»²:

Բժիշկ Գրիգորիսը «Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հիւանդութեան» իր, բժշկության պատմության տեսակետից, շափազանց արժեքավոր աշխատության «Ծուռն որ ցուցանէ զնշանս ուղնաշարին և յղեղին» խորագիրը կրող ենթագլխում, անդրադառնալով ներվային համակարգի հիվանդությունների հարցին, մեզ պարզ պատկերացում է տալիս նաև ներվերի անատոմիայի ու ֆիզիոլոգիայի մասին: Նա գրում է, որ ողնուղեղից, որը իր գործունեությամբ գլխուղեղի հետ սերտ կապի մեջ է գտնվում, նրա ամբողջ երկարությամբ երկու կողմից դուրս են զալիս ներվարմատները և գնում, ներվավորում են իրենց դեմառնեմ գտնվող օրգաններն ու հյուսվածքները, և եթե այդ ներվարմատները վնասվում են, ապա տուժում է այդ ներվով ներվավորվող օրգանի ֆունկցիան: Բերենք այդ տողերը. «...Եթէ այն շիլն գլուխն լնուի, որ ի խոշակն դայ՝ նայ մարդոյն ձայնն կտրի: Եթէ այն շիլն ցլուի, որ ի կրծոց յուսկորն հասանէ՝ նայ նահանջ առնէ: Եթէ այն շիլն լնուի, որ ի փաղաբուշտն կու հասնի՝ նայ գողն առանց կամայ ելնէ ի մարդոյն: Եթէ այն շիլն լինի (իմա լնուի), որ ի յորովայն լինի և կու հասնի՝ նայ աղբն ելնէ առանց կամայ: Եւ

ներքեմն էլ շշարժական երակ», կամ ուղղակի «Երակ» տերմինների տակ ներվ են հասկացել:

¹ ԲՄԹ, թ. VI, Մոսква, ստ. 264—266.

² Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովորին կից Պետական Զեռադրատուն (Մատենադարան) ձեռագիր բժշկարան, № 549, էջ 34բ—37բ:

այսպէս ի յոր անդամ և եթէ լցուի պլղամն՝ խարանէ զամենալին անգամոն ի յիւր գործոյն...»¹

Իսկ Ամբրովլամիք այս բոլորին ավելացնում է «... Եւ այն միշտ չէղն ի նստատեղոյն վերի դիհն է (այսինքն՝ նստաները ուշիալիս—Ա. Կ.), Եւ թիւ ամէն ջղերուն, որ հիմն է՝ այս շափս է Եւ այլ պաղինն ճղեր է, որ ցրուել է ամէն անձն, որպէս որ երակը ենան².

Այս տվյալները մեզ լիովին համոզում են, որ *XI*—*XIV* դ. գ. հայ բժիշկները ներվարանության վերաբերյալ ունեցել են գիտակառ բարձր լմբանումների

Մեզ հասած բժշկական մատենագրության մեջ հետաքրքրական տվյալներ են պահպանվել նաև անոթների նկարագրության մասին Այդ տեսակի ամենալավ սուշ արժեքը է ներկայացնում Մատենադարանու պահվող № 8382 ձեռագիր բժշկարանը, որը արտադրված է *XIV* դարի կեսերում։ Այդ բժշկարանի ռվասն երակի ճանաշման... խորագիրը կրող հողվածում հեղինակը դրում է,

«Առաջի՝ կիֆալն է (գլխային երակ՝ վենա cephalica—Ա. Կ.) երկրորդ՝ կաթաղիկեն է (նախաբաղկի միջին երակ՝ վենա antibrachii mediana—Ա. Կ.).

Երրորդ՝ բասիլիկեն է (թագավորական երակ՝ վենա basilica—Ա. Կ.).

Հորորորդ՝ նահրաբաղան է, ոժվարանում ենք նշել, թե ո՞ր երակի մասին է խոսքը և ի՞նչ ծագում ունի այդ տերմինը.

Հինգերորդ՝ ուիլիմն է, որ ի ներքեւ բաղկին (հավանաբար խոսքը վերաբերում է ծղիկային երակին՝ վենա ulnaris—Ա. Կ.).

Վեցերորդ՝ սափին է, որ ի ներքեւ ծընկանն... (առերես երակ՝ վենա saphena—Ա. Կ.).

Էթերորդ՝ արինսան է, որ կայ ի յոլոքնուն մէջն (ոլոքային երակ՝ վենա tibialis—Ա. Կ.).

Ութերորդ՝ ճակտին երակն է (ճակտային երակ՝ վենա frontalis—Ա. Կ.).

Իններորդ՝ քիթին երակն է (քթային երակ՝ վենա nasalis—Ա. Կ.).

Մասներորդ՝ լեղուաթոռին երակն է, և ամենոյտ մայրան կիֆալն է զլիսուն երակն։ Կաթաղիկեն և բասիլիկէն, կարգած է ի բաղուկն երթայ դէպ ի յանթն։ Կիֆալն ի վերայ շրջի դէպ ի թիկունքն, կա-

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովորին կից Պետական Զեռագրատուն (Մատենադարան), ձեռագիր բժշկարան, № 415, էջ 189ա:

² Ամբեղովլար Ամասիացի, Օգուտ բժշկության, խմբ. Ստ. Մալխաչյանցի, Արմֆան, Երևան, 1940, էջ 43.

թաղիկէն ճուղ է ի բասիլիկէն ի կիֆալին յերվանցն շըղեր գան յիրար ընկնին լինի . կաթաղիկէն ինքն կարգած է ի մէջն ի յայս երկու երակիս: Զորրորդ երակն բազկալան, որ յիշեցաք. որ կոչի նահրաբաղան, կարգած է ի վերայ ոսկրի բազկին և երակն որ կոչի մուսալիմ, երթա ի վերա թաթին ի մէջ ճկութին ընդ իր ընկերն եւ սափին մատ է ի յայս երակս ի յաջ կողմանն արդանիս, այն է մատ ի կրունկն ի ծախ կողմն: Ճակտին երակն ի մէջ ճակտին լինի Եւթ (2) երակն, որ մատ է ի քնիրն են՝ պատած շուրջ զբներովն, աշաց երակքն են. կէսմն մարդկանց երևնա և կէսմն շերենայ. քաւել զվիզըն յիրարած են, և ապա երևնայ. քթին երակն աներևույթ է մատ ի ծայր քթին, յորժամ մատամը մամշէս զծայր քթին՝ հանց թըւենայ թէ ճեղքածք է, ի յայն մէջն լինի երակն: Եւթ. (2) փողերակին և թ. (2) երակ շիթանցն կան... Եւթէ ի պէտք լինի, որ զկիֆալն բանաս ու չի կարենաս գտնով, ոռու առ զմէկն ի իր ճղերուն, Բայց զրասիլիկէն ի ներքի ճղերն ի կողմանէն լինի. բազկին և կիֆալին ճղերն ի վեր իդիհէն լինի, ընդ գրուց կողմանն, ապա թէ ոչ այն երևնայ և ոչ այն և զկաթաղիկէն բանաս զայտոց զհարկն անցնէ... բայց փողերակն յայնժամ պիտի առնով, երբ շումչն նեղնայ և հնգայ...¹

Ինչպես տեսնում ենք, սույն տեքստի պատմա-բժշկագիտական արժեքը միայն այն չէ, որ այստեղ նա մատնանշում է 20-ից ավելի երակների անունները, այլև այն, որ ճեղինակը փորձում է պարզել իր թված յուրաքանչյուր երակի տեղը, ցուց տալ, թե այն իրենից ավելի մեծ ո՞ր երակի ճյուղն է հանդիսանում և դեպի մարմնի ո՞ր մասն է գնում ու անոթավորվում: Մեղ թվում է՝ այստեղ կարորն այն չէ, որ ճեղինակը այս ընթացքում թուլ է տալիս որոշ անձշտություններ և սխալներ, այլ այն, որ նա կանգնած է անոթների անտումիական ճետազոտման ճիշտ մեթոդի վրա:

Այսպես, օրինակ, նա գտնում է, որ ճակատի, քթի, լեզվաթոռի երակների մայր երակը հանդիսանում է զվիսի երակը (vena serholica)²: Ինչպես «կաթաղիկէ» կոչվող երակը, այնպես էլ «բասիլիկէ» կոչվողը՝ գտնվում են բազկի վրա: Կաթաղիկի երակը հանդիսանում է v. basalica-ի ճյուղերից մեկը և գնում է դեպի անոթը: Ձեռքի ճկութի երակն սկիզբ է առնում բազկային երակից: «Բազ-

¹ Հաջկական ՍՄՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատում (Մատենադարան) ձեռ. № 8382, էջ 79ր—82ա:

² Ճեղինակը V. Cephalica տերմինի տակ հասկանում է՝ ա) լժային երակը (V. Jugularis—Ա. Կ.), որից զալիս-թափվում են գվիսի երակները, բ) նույնի տակ հասկանում է բազկի մաշկային երակը:

կալան» երակը, որը գտնվում է բազիկի սուրբի վրա, բազիկի խորանիստ երակն է, մինչդեռ ճկույթինը, իր ընկերոց հետ միասին են: Պետք է հնիքաղըն, որ հեղինակը ճկույթային երակ ասելով հասկացել է ծղիկային երակը, որն ընթանում է ճկույթի կողմով:

Ստորև հեղինակը խոսում է պիտի երակի ճյուղերի մասին, որ v. basilica-ի ստորին ճյուղերը գտնվում են «կողմնային» (Later-ral—Ա. Կ.) մասերում: Անոթների նկարագրությունների ժամանակ նույնպես նա շատ հաճախ դործածում է հայերեն անառողմիական տերմիններ և հասկացողություններ: Այսպես, օրինակ՝ «կողմնային», «ներքին», «գրասցին», «վերին» և այլն:

Երակների վերաբերյալ սույն տեքստը ուշադրության արժանի է նաև այն տեսակետից, որ այստեղ հանդիպում ենք երակների անառողմիական հայերեն տերմիններին: Այսպես, օրինակ՝ զիտի, ճակատի, վզի, քունքերի, քթի, շրթունքների, լիզվաթոռի, բազիկ, ճկույթի, ոլոքի, կրնկի, «երակ բութամիջին», «երակ ճկույթեան», «երակ ոտիցն թաթն», «շնչափողի երակ», «թոքերի երակ», «լէրդի երակ», «ստամբսի երակ», «սրտի երակ», «երիկամների երակ», «փայծաղան երակ», «փաղայրաշտին երակ» և այլ օրդան-սիստեմների, ինչպես «երակ», այնպես էլ «շարժերակ», այսինքն զարկերակներն են հիշատակված: Դրա հետ մեկտեղ մենք հանդիպում ենք նաև հունական ծագում ունեցող տերմինների դործածության, հայկական տառադարձության ձևով, օրինակ՝ «կիֆալ», «բասիլիկն» «սափին» և այլն:

Այսուհետև հանդիպում ենք նաև լատինական տերմիններին, հայկական արտասանության ձևով, օրինակ՝ «սափին», որ, ինչպես վերևում ցույց տվինք, v. saphena-ն է, կամ ուրիելիմն երակ, որ հավանաբար v. ulnaris-ի աղավաղված ձևն է: Նույնը կարելի է ասել «բասիլիկէն» տերմինի մասին, որը լատինական v. basilica-ն է:

Տեքստում հանդիպեցինք «նահրադան» և «արիլնսան» տերմիններին, որոնց ծագման մասին դժվարանում ենք որոշակի որևէ բան ասել:

Ինչպես վերևում նշեցինք, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ բժիշկները կատարել են անոթների քանակական հաշվառում ևս: Այդօրինակ տվյալներ է պարունակում նաև Մատենադարանի № 4268 ձեռագիրը, որը արտագրված է 1384 թվականին: Այդ ձեռագրի անհայտ հայ հեղինակը գրում է, որ մարմնի անոթների ընդհանուր թիվը կազմում է 360, որից 180-ը զարկերակներ են և 180-ը՝ երակներ: Ի միջի այլոց նրա հեղինակը գրում է, որ մարդու մարմի-

նը պարունակում է 600 կաթիլ արյուն և որ մի կաթիլ արյունը հավասար է մեկ մթխալի¹: Ի դեպք, որ «մթխալը» ծանրության շափէ է, որը միջին դարերում ընդունված էր, այսպես կոչված, արարական բժշկականության մեջ և կշռորդ էր 4,416 գրամի: Նշանակում է, հեղինակի կարծիքով, մարդու արյան կշիռը շուրջ 2 կգ 650 գ է: Այսպիսով, նա մոտավորապես ճիշտ է որոշել այդ ֆիզիոլոգիական հետաքրրական խնդիրը:

* * *

Այժմ անցնենք ներքին օրգանների, նրանց կատարած անատոմիական նկարագրությունների վերլուծության հարցին: Այստեղ ևս հայ հեղինակները նյութերը շարադրում են, ինչպես ընդունված էր միջին դարերում, վերից-վար սկզբունքով, այսինքն սկսելով գրլիսից, ըստ օրգան—սիտեմների, վերջացնելով ամորթիներով:

Գլխուղեղի անատոմիայի վերաբերյալ մեր աղբյուրներում եղած տվյալները շափազանց աղքատիկ են: Նշված է, որ այն գրտնըվում է գանգոսկրներից կազմված տուփի մեջ, որը, ինչպես արդեն ասացինք, վերևից ծածկում են կարծր և ապա անմիջապես գլխուղեղի վրա գտնվող փափուկ թաղանթները: Գլխուղեղում հիշատակվում է 3 փորոքների գոյության մասին: Նրանցից առաջինը գրտնըվում է ճակատային կողմում և ավելի մեծ է, քան երկրորդը: Երկրորդ փորոքը, որը կից է, այսինքն հաղորդակցվում է առաջին փորոքի հետ, գտնվում է գլխուղեղի միջին մասում: Երրորդ փորոքը գտնվում է գլխուղեղի հետեւ հատվածում և ավելի փոք է, քան առաջին երկուաը:

Սույն տեքստում հեղինակը խոսում է գլխուղեղի անատոմիական մեկ հասկացողության մասին. նա գրում է, թե հարկավոր է իմանալ, որ ուղեղը 3 բաժիններից է բաղկացած (խոսքը նրա փորոքների մասին է—Ա. Կ.) և որ նրանք միմյանց հետ ամուր կապված են, այսպես կոչված, «պտունի տմաղի» միջոցով (հավանաբար խոսքը վերաբերում է բրտամարմին կամ մեծ կպուկին՝ commisura cerebri տագու կամ corypus collosum — Ա. Կ.), ուղեղի մեջ նրա կարծիքով «կարմիր երակնի կայ». և այս երկնուն որն շարժող է և որն խաղաղ է²: Ինչպես տեսնում ենք, այստեղ հեղինակը հիշա-

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատուն (Մատենագրան), ձեռ. № 4268, էջ 259ա:

² Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատուն (Մատենագրան), ձեռ. № 7049, էջ 100:

տակում է, որ գլխուղեղում գոյսոթյուն ունեն զարկերակներ և երակներ (arteria et vena cerebri—Ա. Կ.).

Սիրտը՝ համաձայն մեր տրամադրության տակ գտնվող բոլոր ձեռապրական աղբյուրների նկարագրության, անզավորված է կրծքավանդակի ստորին մասում, դեպի ձախու և եւ ինքն (սիրտը) պինդ մսէ է դոյացել և ինքն յամանի մէջ է ամուր որ չի վնասիան Խոսքը սրտակրանքի (pericardium-ի) մասին է, վերշինս այնպես է կառուցված, որ սիրտը նրան չի առնշվում և նա կոչված է սիրտը պաշտպանելու «ամեն զարկից», պատահարից: Սրտակրանքի մեջ գտնվում է քիչ քանակությամբ «փրփուր» (խոսքը շնային հեղուկի մասին է, որը, ինչպես հայտնի է, ֆիզիոլոգիական է՝ սրտի աշխատանքը դյուրին դարձնելու համար—Ա. Կ.), ի միջի այլոց, և եռանարդո դա Վինչին գտնում էր, որ սրտակրանքը իր մեջ պարունակում է օդ, որը այնտեղ է մտնում թոքերից (1): Սիրտը կլոր է, որի վերին ծայրը «հաստ է», իսկ վարինը՝ «բարակ», սիրտը շրջապատված է թոքերով²:

Սիրտը 2 փոք ունի և 2 ականջ՝ մեկը աջ կողմումն է, մյուսը՝ ձախ: Շարունակության մեջ ասված է՝ «Եւ այն փորն որ յաջ դին է ինքն Բ. (2) ծակ ունի, ի յայն երակնէն, որ զարինն ի լերդին ի սիրտն կու զարկէ (խոսքը վերաբերում է վերին և ստորին գողերակներին՝ vena cava superior et inferior —Ա. Կ.) և Ա. (1) այն է, որ ի սրտին ի թոքն կերակուր կու զարկէ (հասկանալի է, որ խոսքը վերաբերում է թոքային զարկերակին՝ ար. pulmonalis-ին—Ա. Կ.): Եւ այն փորն, որ ի ձախ դին է, և այն այլ Բ. (2) ճանապարհ ունի՝ Ա. (1) վասն օդոյ համար, և Ա. (1) որ ի թոք (է)ն քամի հասցնէ իր շարժելովն և զինքն հովացնէ՝ (խոսքը վերաբերում է թոքային երակներին՝ V. pulmonalis-ին—Ա. Կ.) և Ա. (1) այլ այն է, որ այն միծ երակին (խոսքը աօրտա-ի մասին է—Ա. Կ.) համար է, որ շիրանին երակն լիրմէն կելնէ և զամէն անձն այն կու տաքցնէն³:

Ինչպես հայտնի է, Կ. Գալենը չեր ընդունում, որ սիրտը մկանային կառուցվածք ունի, պատճառաբանելով, որ մկանները անպետք կլինեին այն ֆունկցիայի համար, որ կատարում է սիրտը, իսկ կեռնարդո դա Վինչին կարծում էր, որ սիրտը ամուր է ինչպես

¹ М. А. Тикотин. Леонардо да Винчи в истории анатомии и физиологии. 1957, стр. 120.

² Հայկական ՍՍՌ Սինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատուն (Մատենադարան), ձեռ. № 7049, էջ 100ա:

³ Նույն տեղում, էջ 100ա:

կոճիկը։ Հայ բժիշկները, սակայն, ինչպես տեսանք, ընդունում էին, որ սիրտը մկանային կառուցվածք ունի։

Ինչպես Մատենադարանի վերը հիշված № 7049 ձեռագիր բժշկարանի հեղինակը, այնպես էլ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի մյուս բոլոր հայ բժիշկները սրտի անատոմիային նվիրված իրենց շարադրանքներում սիրտը նկարագրում են որպես հատուկ հըլկված— «կոկ» մկանների գոյացություն։ Խակ ինչ վերաբերում է սրտի անատոմիայի նկարագրության մեջ՝ Գալենի թուլ տված կոպիտ սխալին, այն մասին որ, իբր աշ և ձախ փորոքների միջև գոյություն ունի ենթադրյալ անցք, որի միջով, իբր թե, արյունը հոսում է սրտի աշ փորոքից ձախը, պետք է ընդգծենք, որ հայկական աղբյուրներից և ոչ մեկում այդ մասին ակնարկ անգամ չկա։ Սրտի աշ և ձախ փորոքներից բացի, հայ բժիշկները հիշատակություն ունեն նաև աշ ու ձախ «ականջների» մասին։ ամենայն հավանականությամբ՝ սրտի աշ ու ձախ «ականջներ» տերմինի տակ մեր հեղինակները, ինչպես հետագայում նաև կեռնարդո դա Վինչին, հասկացել են նախասրտեր¹։

Բոլոր ձեռագրական աղբյուրները, առանց բացառության, լյարդի բնական, այսինքն տեղագրական անատոմիային անդրագանական, նրա տեղը որոշում են կրծքավանդակից ներքև, դեպի աշ, նրանք լյարդը նմանեցրել են յոթնորյա կուանի, նշելով, որ այն գտնվում է ստամոքսին կից, և ստամոքսը հպվում է նրա փոսի հետ (խոսքը վերաբերում է լյարդի ձախ բլթի ստորին երեսի պումին՝ impressio gastrica-ին —Ա. Կ.)։ Լյարդի նկարագրության մեջ նըշված են նրա առաջնային սուր եղրը, ողնաշարային, աշ և ձախ կողմերը, լյարդի գմբեթը։ Այնուհետև, մեր բազմաթիվ ձեռագրական աղբյուրներում հիշվում են ինչպես լյարդի պարենիմայի մեջ գտնվող անոթները, այնպես էլ փորի խոռոչի օրգաններից լյարդի մեջ գնացող մեծ երակը (գոներակ՝ vena portae—Ա. Կ.) և նրանից դուրս եկող ու դեպի սիրտը արյուն տանող գոգերակը (vena cava inferior—Ա. Կ.)²։ Լեղապարկը կախված է «ի յինքն», այսինքն՝ լյարդից, այնպես, կարծես մարդը ձեռքում նարինչ բռնած լինի։

Ամերդովաթը «Կերպ ստեղծման լեղուին թէ որպէս է» առանձին վերնագրի տակ լեղապարկի անատոմիան նկարագրում է հետեւյալ կերպ. որ «լեղուին» (լեղապարկը՝ cisticus choledochus—

¹ Դ. А. Жданов. Леонардо да Винчи — анатом. Москва, 1955, стр. 65.

² Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատուն (Մատենադարան), ձեռագիր բժշկարան № 415, էջ 92ա—93բ.

Ա. Կ.) միացած է լինում լվարդին: Նրա կարծիքով՝ լեղապարկը, փայծաղի նման, ունի երկու բերան, մեկ բերանը լվարդի փոսից (լվարդի դրուք՝ hilus hepatis—Ա. Կ.) դեպի ինքն (լեղապարկն) է՝ զնում (խոսքը լվարդի ծորանի՝ ductus hepaticus-ի մասին է—Ա. Կ.), իսկ երկրորդն իրենից (լեղապարկից) դեպի ստամոքսն է զնում (լեղածորան՝ ductus cisticus—Ա. Կ.), տանելով այնտեղ սաֆրան, այսինքն լեղին (խոսքը ductus choledochus-ին է վերաբերում—Ա. Կ.): Այնուհետև նա դրում է, որ լեղին մասնակցում է կերակրանյոթերի մարսման պրոցեսներին և թեթևացնում է մարմինը¹:

Փայծաղին (lien) վերաբերող ձեռագրական նկարագրություններում նախ նշված է տեղագրական անատոմիայի տեսակետից նրա տեղը՝ կողերի ներքենից դեպի ձախու նա երկար և տափակ է, ինչպես եղան լեզուն, բայց այն կողմից, որ ստամոքսին է կպչում, մի փոքր փոս է: Այնուհետև ասված է, որ փայծաղից դեպի ստամոքսը զնում են երկու մեծ երակներ: Հավանաբար խոսքը վերաբերում է կամ փայծաղային զարկերակին և երակին (arteria et vena lienalis), որոնք, ինչպես հայտնի է, անցնում են ստամոքսի հետեւով, կամ էլ փայծաղային զարկերակից դեպի ստամոքսը զնացող երկու ճյուղերին, որոնցից մեկը, համեմատաբար ավելի մեծը՝ arteria gastro epiploica sinistra-ն է, իսկ մյուսը, ավելի փոքրը՝ arteria gastricae brevis-ը: Այնուհետև, խոսելով օրգանիզմում փայծաղի խալացած դերի մասին, հայ բժիշկները դանում են, որ «արյան մրուզը» և առհասարակ հիվանդությունների ժամանակ հումորներից առաջացած՝ մարմնի համար «ամեն աղբ» հանդիսացող անպետք մասերը կուտակվում են փայծաղի մեջ: Վերջում նշում են, որ «փայծաղը թեթև, քնքուշ և ցանցառ» հյուսվածքից է կազմված:

Հայ բժիշկների շարադրանքներում որոշ հետաքրքրություն են ներկայացնում նաև շնչական ուղիների օրգանների անատոմիային և ֆիզիոլոգիային վերաբերող նյութերը: Հիվանդությունների նկարագրությունների բաժնում որպես շնչական օրգաններ հատկապես նշված են՝ «բթափողերը», «խոշակը», «խոշագլուխը», «թոքերի և լէզոն» այսինքն բրոնխները, թոքերը: Այնուհետև նկարագրված է հիշյալ օրգանների «ներսից պատող մաշկը, կամ տափակ շի-

1 Ամիրդովլյար Ամասիացի, Օդուտ բժշկության, խմբ. Առ. Մալխասյանցի, Արմֆան, Երևան, 1940, էջ 32:

2 Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատում (Մատենադարան), ձեռ. № 7049, էջ 102ա:

լը»: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է այդ օրգանները ներսից պատող լորձաթաղանթին: Բերանի խոռոչի օրգաններից հիշատակվում է լեզուն, լեզվակը, աջ և ձախ կողմերում գտնվող նշիկները (tonsilla), բերանի խոռոչը և նրանում գտնվող օրգանները պատող լորձաթաղանթը, նրանց անոթավորումը և ներվակվորումը¹:

Թոքերը (pulmo) կախված են կրծքավանդակի մեջ այնպես, որ ամբողջապես լցնում են այն: Թոքերը կառուցված են քնքուշ և ցանցառ մսից, դրա շնորհիվ է, որ նրանք կարողանում են կատարել շնչառության «առ և տուրը» և արտաշնչման գործողությունները: Բժիշկ Գրիգորիսը թոքերի հիվանդությունները նկարագրելիս, գործ է ածում «Թոքերի շնչերակներ», «Թոքերի երակներ» տերմինները: Կարծում ենք, որ նրան հայտնի են եղել բրոնխոլիները և թոքերի զարկերակների ու երակների անոթավորումը, այսինքն նա թոքերի ալվիոլար հյուսվածքի մանր շնչափողերի և զարկերակների ու երակների մասին գաղափար է ունեցել²:

Բժիշկ Գրիգորիսը իր շատ արժեքավոր աշխատության՝ «Վասն կրծոցն նեղերոյն, որ լինի ի տափակ շլերոյն մաշկն, որ զկողն է պատեալ» խորագիրը կրող գլխում տալիս է պլերիտների ախտաբանության կլասիկ նկարագրությունը: Տեքստից պարզ երևում է, որ նրան հայտնի են եղել ինչպես պարետալ, այնպես էլ վիսցիրալ պլերայի թերթիկները: Նա գրում է. «... և կրծոց զիլքն ի ներսէ և ի դրուցէ կողքն և փուր մաշկքն», նրանք «կող են», «ողորկ» որպեսզի իրար շկպչեն³:

Երիկամները (τερ), ըստ մեր ձեռագրական աղբյուրների, գրտնըվում են «կոնակին մէջ», այսինքն գոտկային շրջանում (τετροπεριτον.): Ըստ նկարագրության աջ կողմի երիկամը լարդին մոտիկ է, որովհետև ավելի բարձր է տեղակայված, քան ձախ երիկամը, բայց երկուսի փոսությունը միատեսակ է: Այստեղ, հավանաբար, գրչի կամ այլ պատճառով սխալ է թույլ տրվել, որովհետև անատոմիայի այժմյան տվյալների համաձայն, ձախ երիկամն է ավելի բարձր գտնվում: Մեր միջնադարյան բժիշկների պատկերացմամբ՝ երիկամներից յուրաքանչյուրն ունի մեկ երակ և մեկ զարկերակ (arthera et vena renalis — Ա. Կ.):

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատում (Մատենադարան), ձեռ. № 415, էջ 56ա—60բ:

² Նույն տեղում, էջ 56ա—60բ:

³ Նույն տեղում, էջ 69ա—71ա:

⁴ Նույն տեղում, էջ 71ա:

Այնուհետև նկարագրված է մի մեծ «փուճ երակ», որը դուրս գալով երիկամից, միանում է միզապարիի հետ։ Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է մեղածորանին (ureter), որը բժիշկ Գրիգորիսը ուղղակի անվանում է «երիկամների ջրին ճանապարհն»¹, Բոլոր ձեռագրական աղբյուրներում երիկամների պարենիմայի մասին ասված է «երիկամի մսերը քան զայլ մսերն քննուց և հօսոր արար, իւր հանգուցեր (խոսքը, հավանաբար, երիկամների պակիկների՝ papile renalis-ի մասին է — Ա. Կ.), զշեղս ամուր և ինքն ի շղերուն մէջն հաստատեաց, որ ամուր պահէ վերիկամաց մաշկն»։ Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է երիկամների ֆիրող պատյանին (capsule renalis — Ա. Կ.)։

Խսկ բժիշկ Գրիգորիսը, խոսելով երիկամներում քարագուացման էտիոպաթոգինեղի մասին, նշում է, որ հատկապես ծեր մարդկանց մոտ քարագուացմանը նպաստում է նաև նրանց երիկամների ու ռերակների նեղացած լինելու հանգամանքը։ Այստեղից դժվար չէ եղակացնել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի բժիշկը դադախար է ունեցել երիկամների պարենիմայի, զարկերակների և երակների մասին։ Կամ նույն բժիշկ Գրիգորիսը, երբ ցանկանում է բացարել, թե ինչո՞ւ միզապարկի քարերն ավելի մեծ են լինում, քան երիկամինը, պատասխանում է, որ «երիկամի փորը» ավելի փոքր է, քան միզապարկը։ ՛Երիկամի փորը տերմինի տակ նաև հասկացել է երիկամի ավազանը (pelvis renalis — Ա. Կ.)²։

Ստամոքսի (ventriculus, gaster) անատոմիայի և ֆիզիոլոգիայի հարցերին նվիրված հատուկ տեքստերում, ինչպես նաև այդ օրգանի ախտաբանության նկարագրություններում, մեր հեղինակները ամենից առաջ որոշում են ստամոքսի բնական տեղագրական դիրքը մյուս օրգանների նկատմամբ։ Այդ կապակցությամբ Ամիրդովլաթը գրում է, որ ստամոքսի բնական տեղը կրծքավանդակից ներքեւ է, բայց ստամոքսի վերին հատվածը, այսինքն ստամոքսի հատակը (fundus ventriculi — Ա. Կ.) դեպի ձախ կողմն է, և վարինը՝ դեպի աջ։ Միրտը, լարդը և փայծաղը շրջապատում են ստամոքսը այնպես, որ լարդը գտնվում է նրա աջ կողմում, իսկ փայծաղը՝ ձախ կողմում և նրանց միջև «կիպ միս կա» (խոսքը ստամոքս-փայծաղային կապանի՝ ligamentum gastro lienalis-ի մասին է — Ա. Կ.), «և վերն նոսր միս կայ» (խոսքը ստամոքս-լարդա-

¹ Հայկական ՍՄՌ Մինիստրների Սովորին կից Պետական Զեռագրատուն (Մատենագրան), ձեռ. № 415, էջ 89բ—103բ։

² Նույն տեղում, էջ 98բ—102ա։

յին կապանի՝ ligamentum gastro haepatica-ի մասին է — Ա. Կ.):

Հստ մեր հեղինակների՝ ստամոքսի շրջապատում գոտնվող, վերը հիշատակված օրգանների հյուսվածքների ու կապանների ֆիզիոլոգիական դերը օրգանիզմում երկակի է:

Առաջին, նրանք տաքացնում, օգնում են ստամոքսի ընդունած կերակրանյութերը դյուրին մարսելու ֆունկցիային, երկրորդ, որ մենք շատ բարձր ենք գնահատում, հեղինակը գրում է. «և Բ. (երկրորդ) պատճառն այն է, որ յորժամ շատ աշխատիս և շարժիս՝ նա (ստամոքսը) ի տեղաց չի շարժի»¹:

Քերված տողերից պարզ է դառնում, որ Ամիրդովլաթին հայտնի է եղել կապանների միջոցով ստամոքսն իր բնական տեղում ֆիզված լինելու հանգամանքը: Մյուս կողմից՝ այդ նշանակում է նաև, որ նա գաղափար է ունեցել, ծանր աշխատանքի, զանազան պատճառների հետևանքով՝ ստամոքսի իջեցման (gastroptos) մասին:

Այսպիսով, ստամոքսը շրջապատողը օրգանների, կապանների և հյուսվածքների անատոմա-ֆիզիոլոգիական նշանակությանը հեղինակի տված մեկնարանությունը, ամբողջությամբ վերցրած, միանգամայն ուսցիոնալ է և գիտականորին պատճառարաբանված:

Հեղինակն աշխատում է ստամոքսի ընդհանուր նկարագրության վերաբերյալ իր ընթերցողներին տալ ամբողջական պատկերացում, ուստի նա գրում է. «Եւ իր ձեւ որպես դդումն է», որ նա ունի չ վիզ՝ մեկը ստամոքսի վերի վիզն է (խոսքը կերակրափողի որովայնային հատվածի՝ pars abdominals oesophagi-ի մասին է — Ա. Կ.) և մյուսը ստամոքսի ներքին վիզն է (խոսքը ստամոքսի դրույլի՝ pyloris ventriculis-ի մասին է — Ա. Կ.): Ստամոքսի մեկ կողմը տափակ է (գատարկության դեպքում), իսկ մյուս կողմով «գունդ» է: Ապա Ամիրդովլաթը ստամոքսը նմանեցնում է երաժշտական ՛տամբուր՛ գործիքին «և իր ձեւ որպես զտանպուայ է և Բ (2) վիզ ունի, — գրում է նա, — Ա(=1)-ի վեր է և Ա(=1)-ի վայրը»²: Ստամոքսը ներսից կոկ չէ, ինչպես «զխաւուն» է (սեխի մի տեսակ): Այս համեմատությամբ հեղինակը ցանկանում է նշել ստամոքսի «ներսի մաշկի» լորձաթաղանթի (tunica mucosa s. membrana mucosa — Ա. Կ.) անհարթությունը, ինչպես ինքն է գրում, նրա «կոկ» վինելու հանգամանքը: Ստամոքսի վերևի մասը նեղ է (նրա cordial հատվածի մասին է խոսքը — Ա. Կ.), իսկ ստամոքսի միջին հատ-

1 Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկության, Արմֆան, Երևան, 1940, էջ 35.

2 Նույն տեղում:

վածք լայն է և դա նրա համար է, որպեսզի կերակրանյութեր շատ ընդունեի (փոսոքը վերաբերում է ստամոքսի մարմնին օօրու վերաբերում—Ա. Կ.):

Այնուհետեւ հեղինակը գրում է, որ ստամոքսի կառուցվածքը նուրբ է, որպեսզի զգայնություն ունենա, իսկ նրա (ստամոքսի) զգայնությունն այն է, որ կերակուր է պահանջում (այսինքն՝ ախորժակ զրդում—Ա. Կ.): Եթե նրան զգայնությունն ավելի է անհրաժշտ, քան ստամոքսի բերանին: Ի դեպ՝ բժիշկ Գրիգորիսը նշում է, որ ստամոքսի ուժը առանձնապես ստամոքսի պավապի մեջն է, այսինքն՝ ստամոքսի բյուրոցիկ կոչվող հատվածի մեջ: Ստամոքսն օժտված է իրար լրացնող չորս տեսակի ուժերով կամ ֆիզիոլոգիական ֆունկցիաներով. դրանք են՝ «բաշողական», «բռնողական», «մարտողական» և «արտաքսող»: Այնուհետև Գրիգորիսը իր աշխատության մեջ բազմիցս նշում է, որ ստամոքսը իր ֆունկցիաներով «ընկերական», «դրացիական» սերտ կապերի մեջ է գտնվում սրտի, լյարդի և այլ օրգան-սիստեմների հետ¹:

Ստամոքսի անատոմիայի և ֆիզիոլոգիայի վերաբերյալ հետաքրքրական տվյալներ է պարունակում նաև Մատենադարանի № 464 ձևագիր բժշկարանը: Այնտեղ «Վասն ստեղծման ստամոքսին» խորագիրը կրող զբանում մենք կարդում ենք. «...Զստամոքսն ի շղէ և ի մսէ և շուրջ ի ստամոք բերանն զէղ շատ կայ, և ներբի դեհն ի յատակն ստամոքին միւ շատ կայ...»²:

Ինչպես տեսնում ենք, այդ տողերում պարզ ասված է, որ ստամոքսը կառուցված է «ի շղէ և ի մսէ»: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է ստամոքսի պատի անատոմիական կառուցվածքին: Եթե պայմանականորեն ընդունենք, որ հեղինակի հիշատակած «ի մսէ» ասածը վերաբերում է ստամոքսի երկրորդ շերտին, և եթե նկատի ունենանք նաև այն, որ Մատենադարանի № 415 ձեռագիր բժշկարանի հեղինակը, ինչպես վերևում ասացինք, խոսում է ստամոքսը ներսից պատող «տափակ մաշկի», այսինքն լորձաթաղանթի մասին, ապա այն դեպքում կարելի կլինի կարծել, որ XI—XIV դարերի հայ բժիշկներին հայտնի են եղել ստամոքսի պատի երեք շերտերը: «Ի շղէ» տերմինը օգտագործելով, մեր հեղինակը, ամենայն հավանականությամբ, նկատի է ունեցել ստամոքսի առաջին ինքնուրուց հյուավածքային շերտը (այսինքն՝ serosa-ին շերտը—Ա. Կ.):

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռադրատում (Մատենադարան), ձեռ. № 415, էջ 74_Բ—85_Բ:

² Նույն տեղում, ձեռ. № 464, էջ 68_ա—69_ա:

Այնուհետև, բժիշկ Գրիգորիսը, Ամիրդովլաթը և մյուս հեղինակները ընդգծում են ստամոքսի «յատակի» (phundus—Ա. Կ.) մկանացին շերտի համեմատաբար ավելի արտահայտված լինելու փաստը իսկ ստամոքսի կարդիալ և պիլորիկ հատվածները, որոնց մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի բժշկական գրականության մեջ «ստամոքսի վերին և ներքեւի բերան» են կոչել, հարուստ են ներվերով։ Այդ ներվերի շնորհիվ է, որ կերակրանյութերն ընդունելիս ստամոքսի վերին բերանը բացվում, իսկ ստորինը՝ «պավապը», այսինքն՝ պիլորիկի հատվածը փակվում է։ Հատկապես բժիշկ Գրիգորիսը գտնում է, որ ստամոքսի հատակը հարուստ է զգացող ներվերով, որոնք նպաստում են կերակրանյութերի մարսման պրցեսին¹:

Այս կապակցությամբ զարգացնելով իր դատողությունները, հեղինակը գրում է, որ կերակրանյութերը ընդունելու շափի համեմատությամբ ստամոքսը առանց դժվարության լայնանում է։ Այդ երկույթը նա աշխատում է բացատրել ֆիզիոլոգիորեն։ «Զի զշեղն քանի որ քարշես կու մեկնի, և երբ թողուս նա այլ վայր յիրար գայ յիր տեղն։ Ապա թէ զմիսն քարշես նա ի ժամն պատոի», — գրում է նա²։ Այստեղ շարադրված է երկու տարրեր բնույթի հյուսվածքների ֆիզիոլոգիական հատկությունների՝ ձգողականության շափի էքսպերիմենտալ ուսումնասիրության հարցը։ Հիշյալ էքսպերիմենտի արդյունքները հեղինակին բերել են այն եղրակացության, որ ստամոքսը հարկ եղած շափով ձգվում, լայնանում է շնորհիվ այն բանի, որ ստամոքսի կառուցվածքի մեջ գտնվում է «զեղն»—հյուսվածքը։

«Կերպ աղեճորտերոյն և յօրինվածոցն նոցին» հատուկ խորագրի տակ հեղինակը նկարագրում է աղիքների անատոմիան և ֆիզիոլոգիան։ Ամիրդովլաթի կարծիքով, աղիքների կառուցվածքը և էությունը նույնն են, ինչ որ ստամոքսինը։ Աղիքները ընդամենը վեցն են՝ 3-ը վերին, որոնք բարակ և նոսր են, և 3-ը ստորին, որոնք թանձր, հաստ և լայն են։ Վերին բարակ աղիքներից առաջինի երկարությունը 12 մատ է (հասկանալի է, որ խոսքը ծաօդեստի մասին է —Ա. Կ.), ամեն մարդու սեփական մատի շափով, — մեծին մեծ, փոքրին փոքր։ Թարակ աղիքների մյուս հատվածները խճճված են, ծուռ և ճակ, բայց այն աղիքը, որ 12 մատնյա է, և միացած է ստամոքսի այն հատվածին, որը կոչվում է «պավապ»,

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատուն (Մատենադարան), ձեռ. № 415, էջ 81—85։

² Նույն տեղում, ձեռ. № 464, էջ 68։

այսինքն՝ պիլորիկ հատվածին Բարակ աղիքների երկրորդ հատվածի անունն է «սայիմ», սրան անոթի աղիք են առում (խոսքը աղիքի՝ intestinum յօյոստի-ի մասին է — Ա. Կ.): Այս աղիքը «սայիմ» են անվանում, որովհետև նրա ժիրը լինելու շնորհիվ կերակրանյութերը արագ են անցնում նրանով և նա զատարկ է լինում: Բարակ աղիքների երրորդ հատվածը «ամայ այիտի զաղ» են կոչում (նա փաթաթված է լինում), որովհետև կերակրանյութերը նրա մեջ երկար են մնում: Հստ Ստ. Մայլխասյանցի, խոսքը բարակ աղիքի վերջին հատվածի՝ գալարաղիի մասին է¹:

Հեղինակը հաստ աղիքները նմանապես բաժանում է 3 հատվածների և տալիս է նրանց տարրեր անուններ: Առաջինը կոչվում է «ավար», այսինքն կույր աղի (հասկանալի է, որ խոսքը սեստի մասին է — Ա. Կ.), որը սկավում է բարակ աղիքներից հետո երրորդը, որ հաստ աղիքի միջին հատվածն է, կոչվում է «այլի զուլին», այսինքն՝ խտաղի (colon — Ա. Կ.): Հաստ աղիքի վերջին հատվածի վերաբերյալ հեղինակը գրում է, որ նա բոլորից լայն է և մեծ, հաստ է և ուղիղ, նրա մեկ ծայրը միանում է հետանցքի (rectum-ի — Ա. Կ.): Հետո (խոսքը լայնութի)՝ առալարեցի-ի մասին է — Ա. Կ.): Հաստ աղիքը կառուցված է «պինդ և ամուր», «հաստ է, լայն ու տափակ», որպեսզի կերակրանյութերը նրա մեջ երկար մնան, և օրգանիզմի համար օգտակար նյութերը լրիվ ներծծվեն²: Վերջում խոսելով հաստ աղիքների՝ վերը նշված անատոմիական առանձնահատկությունների մասին, բժիշկ Գրիգորիսը ասում է, որ դա անհրաժեշտ է նաև նրա համար, որպեսզի մարդը հարկադրված լինի յուրաքանչյուր ժամ ուտելու Մյուս կողմից, եթե հաստ աղիքները ունենալին բարակ աղիքների հատկությունը, այն ժամանակ մարդը հարկադրված կլիներ լուծողական ընդունողի նման ամեն ժամին լուծելու³:

Եկերպ ստեղծման հալարշտին թէ որպէս է առանձին հատվածով Ամիրգովլաթը նկարագրում է միզապարկի անատոմիան և ֆիզիոլոգիան: «Իմացիր, — գրում է նա, — որ միզապարկը գտնվում է աճուկներից ներքև: Նա նման է շշի, ունի վիզ (cervix vesicae urenagae—Ա. Կ.) և վիզն բարակ է, իսկ մեջն լայն և դա նրա համար է, որպեսզի մեզ շատ տանի և յուրաքանչյուր ժամին մարդ միզելու շնան: Միզապարկի կառուցվածքը պինդ է և ամուր... Մի-

1 Ամիրդովլար Ամասիացի, Օղուտ բժշկության, Երևան, 1940, էջ 546:

2 Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատուն (Մատենադարան), ձեռ. Ա 415, էջ 86ա—88բ:

3 Նույն տեղում:

զապարկի վզիկը հաստ է, մի երակ միզապարկի վիզը միացնում է երիկամի հետ (խոսքը միզածորանի՝ սրբեց-ի մասին է—Ա. Կ.), իսկ մի ուրիշ երակ միզապարկից դեպի սեռական անդամն է գնում (խոսքը միզուկի՝ սրբեց-ի մասին է—Ա. Կ.): Միզապարկի վզիկի բերանում գտնվող մսի (սեղման, սեղմիչի՝ sphincter uretri—Ա. Կ.) և վզիկի երակի (ներվի—Ա. Կ.) վատուժություն (թուլություն—Ա. Կ.) պատճենու դեպքում, մարդը սկսում է իր տեղում անգամ միզել և անպակաս կաթ-կաթ միզել¹:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայկական բժշկական մատենագրության մեջ, դարաշրջանի ոգուն համապատասխան, մանրամասնորեն տրված է նաև աշքի անատոմիան ու ֆիզիոլոգիան: Աշքի անատոմիայի և ֆիզիոլոգիայի հարցերին նվիրված լավագույն աշխատությունը Մխիթար Հերացու «Վասն շինուածոց և յօրինուածոց աշացն» վերնագիրը կրող գործը պետք է համարել, որը մեզ է հասել հետագա դարերում կատարված արտագրությամբ: Այսպես, օրինակ, Մատենադարանի № 464 ձեռագիր բժշկարանի անհայտ հեղինակը արտագրելով Մխ. Հերացու վերը նշված աշխատությունը, սկզբում գրում է. «... ասացեալ է մեծ Մխիթար թէ ամեն բժիշկ՝ որ աշաց կամենայ ծառայել պիտի որ զկազմութիւն աշացն կարդայ, որ իր ստածումն իմաստութեամբ լինի... Արդ կամ եղկ ինձ Մխիթարայ, որ յիշեմ գաշաց կազմութիւնն կարճառուու»²:

Ամենից առաջ սույն բժշկարանի հեղինակը մեզ հաղորդում է Մխիթար Հերացու առաջադեմ տեսակետը այն մասին, որ բժշկագիտության բնագավառում տեսական առարկաների և պրակտիկ բժշկականության միջև պետք է գոյություն ունենա անխզելի, սերտ կապ: Հերացին կոնկրետ և շատ դիպուկ է ասում, որ եթե բժիշկը որոշել է օգտակար լինել և բուժել աշքի հիվանդներին, ապա նա ամենից առաջ պետք է լավ իմանա աշքի անատոմիան և ֆիզիոլոգիան:

Այսուհետև նա տալիս է Մխ. Հերացու՝ աշքի անատոմիային և ֆիզիոլոգիային վերաբերող աշխատության շարադրանքը:

Հստ Մխիթար Հերացու նկարագրության, աշքը կազմված է 7 թաղանթից: Նա, թաղանթները հաշվելով դրսից, առաջինի մասին գրում է, որ այն կպած է ոսկրին, արաբները նրան «զուլպի են կոշում», իսկ հայերը՝ պինդ մարմին, որովհետև մյուս թաղանթների համեմատ նա պինդ և նյարդային է (հասկանալի է, որ խոսքը

1 Ամբրդովլար Ամասիացի, Օգուստ բժշկության, Արմֆան, Երևան, 1940, էջ 37:

2 Հայկական ՍՍՌ Մխիթարների Սովետին կից Պետական Զեռագրատուն (Մատենադարան), ձեռ. № 464, էջ 59:

վերոսկրի՝ periorbital-ի մասին է — Ա. Կ.), Այդ թաղանթը կոչված է աշքը ներսից՝ ոսկրի անհարթություններից առաջացող հնարավոր վնասվածքներից պաշտպանելու համար։ Սույն թաղանթը ոմաշատ զարկերակները¹։

Երկրորդ թաղանթը ավելի բարակ է, նուրբ և քննելու սա նույնապես ունի զարկերակներ։ Այդ թաղանթը ծագում է ուղեղը ծածկող փափուկ թաղանթից։ Արաբները նրան «շմիմայ» են կոչում, իսկ հայերը՝ «սեկի» — գրում է Մխ. Հերացին։ Հավանաբար խոսքը վերաբերում է անոթաթաղանթին (uvea s. tunica vasculosa — Ա. Կ.)։

Երրորդ թաղանթի մասին նա գրում է, որ հայերը «արկ» են կոչում, որովհետև արկի նմանություն ունի, նրան անվանում են և «լապարիայ», Այդ թաղանթը առաջանում է երկրորդ թաղանթից։ Բայց միաժամանակ Հերացին նշում է, որ այդ թաղանթին տալիս են «իր (ի) սա անոնք» Երրորդ թաղանթից հետո կա մի գիշություն (խոնավություն — Ա. Կ.), որին արաբները «շումաճի» անունն են տալիս, իսկ հայերը՝ «ապակյա», որովհետև սպիտակ ապակու նմանություն ունի (խոսքը ապակենման մարմնի՝ corpus vitreum-ի մասին է — Ա. Կ.): Դրանից հետո կա մի ուրիշ գիշություն, որը արաբները «ճուղիտի» են անվանում, իսկ հայերը՝ «սառնենի» (բյուրեղյա), որի մասին Հերացին գրում է. «Զի սառնենին փառաւոր և պատուական զօդուած է ի յաշբն զի իւրովն լինի տեսանելիքն և զգա զգանսն, և կերպսն, և իւր բոլորութիւնն վասն այն է զի ընդունի զլուսն, և զիակառակն յինքենէ հանէ. յորժամ որ պիտի խաղաղութիւն և բոլորէն։ Եւ սառնենին մէջ աշացն (որպէս) գունդ մի է ի մէջ կալի, և կամ կէտ ի մէջ բոլորակի պատեն և պահեն զնա. ամէն աստառքն և գիշութեան նորին կան ի ծառայութիւն պատուական...»։ Ինչպես տեսնում ենք, բերված տողերում նկարագրված է ոսպնյակը (lens crystallina — Ա. Կ.)։

Այնուհետև, շարունակության մեջ նա գրում է. «Եւ յետ այս որ է չորրորդ աստառն, որ անուանին յանքապութիայ, որ թարգմանի սարդոստէնի և է նօսր և յիստակ և պարկեշտ, վասն այն կոչեցին այս անուամբս և ինքդ ընդ սառնենուն և ընդ ձուի սպիտակուցենուն ի մէջն է, որ շահոկէ ձուի ըսպիտակուցենին իւր գիշություն»։

¹ Հայկական ՍՍՌ Մինստրոների Սովետին կից Պետական Զեռագրատուն (Մատենադարան), ձեռ. № 464, էջ 59—72։

Ստորև աշքի անատոմիային վերաբերող բոլոր մեջբերումները սույն ձեռագրից ենք կատարել։

թեամբ սառնենոյն...»: Պարզ է, որ այստեղ խոսքը վերաբերում է ցանցենուն:

«Եւ հինգերորդ աստառն զոր անուանեն յանապիա, որ թարգմանի խաղողենի, զի նման է կէս պտղի խաղողի, վասն այսօրիկ կոչեցին այս անուամբս...»: Այս տողերում նշված է ծիածանը (tembrana iris— Ա. Կ.):

«Եւ վեցերորդ աստառն, որ անուանին խառնօպիայ, որ թարգմանի եղջերենի Վասն այնօրիկ կոչեցին այս անուամբս, որ է ինքն ընդ դրաց յիստակ և պայծառ և կոկ զետ մասկալած և այդ է պատճառն, որ եփ զաշքն բանայ տեսնու զպատկերն...» (այսինքն՝ corneus — Ա. Կ.):

Ինչպես վերևում ասացինք, մեր բժշկապետը նկարագրում է նաև աշքի յոթերորդ թաղանթը, որի մասին նա գրում է. «Եւ է. (7)——ըդ աստառն, որ անուանի մովթահիմայ, որ թարգմանի կոշրած և ինքս զետ ծածկոց է, որ ի դրուց պահէ և կոշրի ի վերայ աստառացն...»: Իհարկե, խոսքը աշքի սկլերային է վերաբերում:

Այսուհետև Մխիթար Հերացին խոսում է աշքի մկանների, աշքի ապարատում նրանց կատարած անատոմիական-ֆիզիոլոգիական ֆունկցիայի ու նրանց շեղումների հետևանքների մասին: Այդ առթիվ նա գրում է.

«Եւ գիտելի է զի աշքն ունի 4 մըկուն¹ Ա. (1) ի վերի դեհն, որ զաշքն ի վեր քաշէ դէպի յունքն, և Ա. (1) ի ներքի դեհն, որ զաշքն ի վայր քարշէ դեպի քիթն և յայտն, և Ա. (1) յաղբերին դեհն, որ քարշէ զաշքն դեպի յունքն, և Ա. (1) այլ յակնչին *դեհն և շորսն ի շորս դեպէ բռնեն և թէ միոյն ի նոցանէ գիշութիւն հասնի և թուլանայ աշքն ծոփ և թորի և շիլ լինի.. Եւ ունի Բ (2) մկուն այլ զոր թ (b) ք անուանին նոքա են ածեն զաշքն ի շուրջ ի վեր և ի վայր և ի վեր և ի դիէ ի դիէ ուր կամենայ մարդն»:

Ինչպես տեսնում ենք, Հերացին նկարագրել է աշքի հետևյալ մկանները. վերին ուղիղ մկան՝ *musculus rectus suparior*, ստորին ուղիղ մկան՝ *m. rectus inferior oculi*, միջային ուղիղ մկան՝ *m. rectus medialis*, վերին թեք մկան՝ *m. obliquus suparior*, ստորին թեք մկան՝ *m. obliquus inferior*, դրսային ուղիղ մկան՝ *m. rectus lateralis*: Եվ նրանք աշքը բռնում են շորս կողմից: Եվ, եթե նրանցից որևէ մեկին ոգիշութիւնը հասնի (այսինքն

1 «Ճ» թիվը, անկասկած, հետագայում արտագրող գրիլների սխալի արդյունք է, որովհետև շարունակությունից պարզվում է, որ Մխիթար Հերացին իմացել է աշքի 6 մկանների մասին, ուստի և նրա տվյալները միանգամայն համապատասխանում են անատոմիական այժմյան տվյալներին:

բորբոքվի — Ա. Կ.) և թուղանա, գրում է նա, աշքն ծոխ... և շիլ լինի, նա (մկանը) երկարանում է, և ձգվում է ծովելու:

Այնուհետև հեղինակը նշում է, որ աչքն ունի երեք ուրիշ մկաններ ես, որոնք բանում, են «ջղի փոխի» (տեսողական ներվի՝ *nervus oculis* — Ա. Կ.) ծայրից, որտեղ բիբն է, որը լույսն իրեն մեջ է «հավաքում» (կենարոնացնում — Ա. Կ.), և այդ երեք մկանները բռնում են տեսողական ներվի ծայրից, որպեսզի լույսը կենարոնացած և ուժեղ մնաւ եվ, եթե այդ մկանների «խառնվածքը գիշանան» (երբ մկանը բորբոքվի — Ա. Կ.), և կամ եթե արտաքին պատճեարից «ճորթին», այսինքն պատուին, այդ դեպքում լույսը դուրս է ժայթքում և ցրվում, սփովում է ամբողջ աշրի պաղի մեջը Ահա այդ տողերը. «... Եւ ունի երեք մըկուն այլ, որ բռնել ունին զփող պաղին զծայրն ուր բիբն է, որ զլուն հաւաքել ունի յինքն և այն երեք մըկուն բռնել ունին զփող զդին զծայրն, որ լույն հաւաք կենայ և ուժով, Եւ թէ այս մկունացս խառնուածքն զէշան և կամ թէ ի դրուց հանդիպմանէ ճորթին, նա լոյսն ի դուրս վաթի և ցրուի ընդ ամենայն պատուն...»:

Շարունակության մեջ Հերացին գրում է, որ մկանները բորբոքվելուց երկարում, թուղանում, փափկում են և կարող են ծլդվել Այնուհետև նա նկարագրում է բիբը—նեղացնող—*musculus sphincter pupillae* և լայնացնող—*m. dilatator pupillae* մկանները, որոնց բորբոքման դեպքում տեսողական ներվի ծայրը կծկվում, նեղանում է և բիբը երևում է, ինչպես ասեղի ոռոք, այսինքն ասեղի անցը:

Աչքի վերին կոպն ունի մկաններ, որոնք աչքը բաց են անուա, այսինքն կոպը վեր են բարձրացնում (վերին կոպը բարձրացնող մկան՝ *m. levator palpebrae superioris*—Ա. Կ.) և փակում (*ροπηρածեմկան՝ m. orbicularis oculi*—Ա. Կ.), իսկ ստորին կոպը, գրում է նա, մկաններ չունի, դրա համար էլ չի շարժվում:

Այնուհետև Մխիթար Հերացին անցնում է տեսողական ներվի անատոմիա-ֆիզիոլոգիական հարցերի քննարկմանը, որտեղ նկարագրում է տեսողական ներվերը և նրանց առաջացրած խաշվածքը (*chiasmia-n*):

Այսպիսով, պարզվում է, որ Հերացին շատ լավ իմացել է ոչ միայն աշքի անատոմիան, այլև շլության առաջացման պատճառները:

Աչքի ֆիզիոլոգիայի վերաբերյալ մեր բժիշկների ունեցած տեսակետների ու կուհումների պատմաբժշկական վերլուծությունը կատարել է պրոֆ. Բ. Ն. Մհլիք-Մուսյանը՝ «Աչքը և տեսողական

ներվերը ըստ XII—XV դդ. հայ բժիշկների ձեռագիր աշխատությունների» իր հետաքրքրական հոդվածում¹:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ բժիշկների՝ կնոջ միզասեռական օրգանների անատոմիայի և ֆիզիոլոգիայի մասին ունեցած բարձր գիտելիքների վերլուծությունը տվել է Գ. Գ. Հարությունյանը՝ «Գինեկոլոգիան և մանկաբարձությունը Հայաստանում հին ժամանակներից մինչև սովետական շրջանը» դոկտորական դիսերտացիոն աշխատության մեջ²:

Հասկանալի է, որ մի սեղմ հոդվածի սահմաններում անհնարին է վեր հանել և արժեքավորել մարդու անատոմիային և, հատկապես, ֆիզիոլոգիային վերաբերող այն շափաղանց ուշագրավ նյութերը, որոնք ցրված են մեր բժշկական հարուստ մատենագրության մեջ:

«Զարգացած ֆեռուզալիզմի ժամանակաշրջանի հայ բժիշկների ֆիզիոլոգիական հայացքները» առանձին հոդվածով³ մենք արդեն հանդես ենք եկել և ցույց տվել, որ զարգացած ֆեռուզալիզմի ժամանակաշրջանի հայ բժիշկները փորձի և դիտողականության հիման վրա հանգել են օրգանիզմի միասնության գաղափարին, ենինելով այն թեզից, որ ինչպես օրգանիզմի նորմալ ֆիզիոլոգիական ֆունկցիաներում, երբեմն էլ պաթոլոգիական պրոցեսներում, գլխավոր դերը պատկանում է գլխուղեղին և ներվային համակարգությանը:

Սույն հոդվածի նպատակն է հակիրճ շարադրանքով ցույց տալ մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի հայ բժիշկների՝ անատոմիայի բնագավառում ունեցած գիտելիքների էությունն ու ծավալը:

Մեր ձեռագիր նյութերը հաստատում են, որ հայ բժիշկների գիտելիքներն ու որոնումները անատոմիայի և ֆիզիոլոգիայի բնագավառում մեծ շափով հարվածել են եկեղեցական դոգմաներին ու թեոլոգիային և նպաստել բժշկագիտության մատերիալիստական աշխարհըմբուման զարգացմանը:

¹ Мелик-Мусян Б. Н. Глаз и зрительный нерв по манускриптам врачей-армян XII—XV вв. (տե՛ս Сб. Научных трудов Матенадарана, № 2, 1950, Ереван).

² Арутюнян Г. Г. Гинекология и акушерство в Армении с древних времен до советского периода. Док. диссерт., рукопись, Москва, 1952.

³ Կցօն Ա. Ս. Физиологические воззрения армян-врачей в эпоху расцвета феодальных отношений, «Известия» АН АрмССР, биолог. и сельскохозяйств. науки, том X, № 5, 1957 г.